

ՆՎԱՐԳ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի հայ
բանասիրության ֆակուլտետի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու,*

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության
որակի ապահովման բաժնի պետ*

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մեր օրերում բանահյուսական հեքիաթը թեև այլևս այն չափով չի պատմվում, ինչ առաջ, սակայն այն շարունակում է իր զարգացումը գրականության մեջ: Հեղինակային մոտեցումները ժողովրդական նյութին այսօր բավական տարբեր են՝ սկսած գրական մշակումներից, վերջացած լեզվական փոխադրություններով:

Գրական մշակման ճանապարհով ստեղծվող ժողովրդական հեքիաթների ժողովածուներ վերջին տասնամյակներում թեև սակավ, այնուամենայնիվ ստեղծվել են: Դրանց մեջ կան և՛ նյութին հարազատ բարձրարժեք մշակումներ՝ յուրատիպ հեղինակային մոտեցումներով (Ս. Քոչարյան, Լ. Խեչոյան), և՛ բոլորովին նոր ու արտասովոր սկզբունքներով ստեղծված մշակումներ (Գ. Բաբայան): Որոշ գրողներ էլ վերաիմաստավորում կամ ժամանակակից մեկնաբանություններով են ներկայացնում ժողովրդական հայտնի հեքիաթների պոեմները (Ա. Ոսկանյան, Ա. Օհանյան, Ն. Աղալյան):

Գեղարվեստական մշակումներից բացի այսօր գրական շուկայում մեծ տեղ են գրավում նաև բանագետների կողմից կազմված ժողովածուները, որոնցում ժողովրդական նյութը լեզվական փոխադրության է ենթարկված, բարբառային անհասկանալի և խրթին ձևերը մեղմացված են (Ա. Նազիկյան, Ն. Հակոբյան, Ա. Ղա-

զիյան, Ս. Վարդանյան): Այսպիսի հանրամատչելի ժողովածուները խիստ նպաստավոր են ժողովրդական նյութը վերստին շրջանառության մեջ դնելու առումով:^{***}

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ բանահյուսական հեքիաթ, գրական հեքիաթ, ժողովրդական հեքիաթներ, հեքիաթի լեզաոճական առանձնահատկություններ

Այրելով և կենցաղավարելով բանավոր ժողովրդական հեքիաթը գրառումից հետո ևս չի դադարում իր յուրակերպ գոյությունն ու զարգացումը: Գրառվելով՝ բանահյուսական հեքիաթը մի երկրորդ կյանք է ստանում՝ այս գոյավիճակով ևս շարունակելով ձեռք բերել նորանոր տարբերակներ՝ հեքիաթի հեղինակային մշակումների ճանապարհով: Այսօր մշակված հեքիաթներ ասելով հասկանում ենք որակապես բավական տարբեր պատումներ. և՛ բարձրարժեք գրական-գեղարվեստական մշակումները դասական գրողների կողմից, և՛ պարզապես որոշակի լեզվական մշակման, փոխադրության ենթարկված, գրական լեզվով վերաշարադրված ժողովրդական հեքիաթները: Ներկա հոդվածի շրջանակներում կփորձենք ընդհանուր կերպով ուրվագծել զարգացման այն հիմնական միտումները, որոնք ուղղորդում են բանահյուսական հեքիաթի գրական նման փոխակեր-

պումները վերջին տասնամյակներին:

Բանահյուսության զարգացման ներկա փուլում, հեքիաթասացության կենդանի գործընթացի աստիճանական մարման պայմաններում, շատ ավելի կենսունակ է դառնում արդեն գրառված ժողովրդական հեքիաթը: «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի ակադեմիական բազմահատորյակում լույս տեսած հեքիաթները ներկայումս առավելապես ծառայում են գիտական ուսումնասիրման նյութ, քանի որ որոշ բարբառների անհասկանալիության պատճառով դժվար են յուրացվում հատկապես մանուկ ընթերցողի կողմից: Առաջ է գալիս արդեն գրառված հսկայածավալ հեքիաթային նյութը ընթերցող լայն հասարակությանը մատչելի դարձնելու պահանջը, որն էլ իրականացվում է կանգնող գրական մշակման, կանգնող լեզվական փոխադրության ճանապարհով:

Հեքիաթի մշակման ասպարեզում փայլուն ձեռքբերումներ ունեցած հայ գրողների ավանդներն այսօր, կարելի է ասել, զարգացում չեն ապրում: Ընդհանրապես, արդի գրականության մեջ գերակշռում է հեղինակային հեքիաթը, իսկ ժողովրդական հեքիաթներ մշակող սակավաթիվ հայ գրողներն էլ ժողովրդական նյութի մշակման նոր մոտեցումներ են նախընտրում:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այսօր տպագրվող գեղարվեստական գրականության մեջ բավական մեծ տեղ են գրավում հենց հեքիաթների բազմազան ժողովածուները: Զարմանալիորեն ներկա իրականության մեջ, երբ ընթերցանությունը, մեղմ ասած, իր բարձունքում չի, գրախանութներում ամենասպառվողը մանկական գրականությունն է, մասնավորապես՝ հեքիաթների գրքերը: Այս հանգամանքը ոգևորում է տարբեր հրատարակչությունների՝ զարկ տալ հեքիաթների ժողովածուների լույսընծայմանը: Նման պայմաններում գրքի շուկայում հայտնվում են հեքիաթների ամենատարբեր որակի լույսընծայումներ՝

սկսած դասական սիրված հեքիաթներից մինչև ժամանակակից մուլտֆիլմերի մոտիվներով ստեղծված պատկերազարդ գրքույկներն ու գունազարդման տետրերը, որոնց էջերում մուլտֆիլմերից քաղված պատկերների առատության մեջ ժլատ տեղ են զբաղեցնում երբեմն ոչ այնքան ճաշակով և գրագետ շարադրված բնագրերը: Այսպիսի գրքույկներում երբեմն բավական կոպտորեն և ոչ արհեստավարժ ձևով կրճատվում են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան դասականների հայտնի հեքիաթները, որը երբեմն անհասկանալիության աստիճանի խեղում է հեքիաթի դիպաշարն ու բովանդակությունը:

Սակայն թողնենք նմանատիպ հրատարակչությունները, որոնց քննությունն այժմ մեր նպատակից դուրս է, և սենեռնք մեր ուշադրությունը գրողների կամ մասնագետ-բանագետների կողմից վերջին երեք տասնամյակում կազմված ժողովրդական հեքիաթների մի շարք ժողովածուների ու առանձին մշակումների, որոնց դիտարկումը թույլ կտա որոշակի հետևություններ կատարել ժողովրդական հեքիաթների ընկալման հեղինակային մոտեցումների վերաբերյալ:

Նորագույն շրջանում ստեղծված ժողովրդական հեքիաթների գրական մշակումների ժողովածուներից այսօր, հատկապես համացանցային օգտատերերի շրջանում, ամենից սիրված և ընթերցվող ժողովածուն ասմունքող-արտիստ Սուրեն Քոչարյանի կազմած և մշակած «Արև հեքիաթ» (1979) գիրքն է: Այսօր հայկական համացանցային քննարկումներում (ֆորում) բավական հաճախ կարելի է հանդիպել հենց այս ժողովածուից քաղված ժողովրդական հեքիաթների բնագրերի:

Եթե գրականության մեջ հեքիաթներ մշակողներին պատկերավոր կերպով կարող ենք հեքիաթասացներ անվանել, իսկ նրանց մշակած պատումները՝ հեքիաթների նոր «տարբերակներ», ապա Ս.Քո-

չարյանի դեպքում թերևս այս տերմիններն ավելի մոտ են իրենց նախնական իմաստավորմանը, քանի որ հեքիաթները մշակվել են անմիջապես բեմից բանավոր պատմվելու նպատակով: Ինչպես Քոչարյանի մշակած «Սասունցի Դավիթ» կոմպոզիցիան Լ.Հախվերդյանը համարում է «Սասնա ծռերի» մի նոր տարբերակ՝ մեր օրերի ասացողի հեղինակությամբ¹, այնպես էլ այս ժողովածուի հեքիաթները շատ նման են բանավոր պատումի նոր տարբերակների: Ժողովրդավսակցական լեզվով ստեղծված կենդանի պատումները ավելի անմիջական են դառնում հեղինակ-ասացողի ուղղակի մասնակցությամբ: Ընդ որում, հեղինակ-մշակողն այս ժողովածուում ինքնատիպ սկզբունք է կիրառում. նա հեքիաթները կոմպոզիցիոն մի հյուսվածքի մեջ է դնում՝ ներկայացնելով որպես իր պապի կողմից պատմվող պատումներ, որոնք ունենդրում են թռուները: Հեքիաթների վերջում հաճախ հայտնվում է նաև տատի կերպարը, որը պապի հետ քննարկում է հեքիաթի գաղափարը:

Պապս հեքիաթը որ թամամացրեց, ասեց.

— Տեսա՞ք, ոսկերիչը ոնց խելոքացրեց էն թագավորին:

Տառս, ասած կլինեմ ձեզ, շատ խելոք կնիկ էր:

— Ալևոր,— ասեց,— թագավորի խելոքանալը ո՞րն ա: Չես իմանում, որ թագավորի միրուքը պալատականների ու հարուստների ձեռքին ա: Որ կուռն ուզեն, էն կուռը շուռ կտան:

— Ուրեմն հեքիաթն էլ չասե՞մ,— նեղացավ պապս:

— Չէ,— ասեց տառս,— ինչի չէ, հեքիաթը դաս ա խողներին, ամա թագավորի խելոքանալը լինելու բան չի:

— Դու էլ ես արդար, այ կնիկ,— ասեց պապս:

Իհարկե՝ արդար ա:

Պապի ու տատի այս երկխոսությունները ունկնդրին կամ ընթերցողին օգնում են ճիշտ ընկալելու հեքիաթի իմաստը, ընդգծում են դաստիարակչական դերը, ինչպես նաև անուղղակիորեն նախապատրաստում են հաջորդ հեքիաթի նյութին:

Ժողովրդական հեքիաթների մշակումները մի ամբողջական կոմպոզիցիոն շրջանի մեջ հյուսելու և դրանց «նախաբան հեքիաթ» կցելու մոտեցումը նոր չէ. այսպիսի դրսևորում տեսնում ենք դեռ արաբական «Հազար ու մի գիշերներում»²:

Բեմից ներկայացվելու սկզբունքի առաջնահերթությամբ են մշակված նաև թատերագետ-դրամատուրգ Խաչատուր Ավագյանի՝ ժողովրդական հեքիաթների սյուժեների հիմքով ստեղծված պիեսները³: Վերջինիս մշակումները յուրատիպ են նրանով, որ հեղինակը մշակման է ենթարկել ոչ թե առանձին հեքիաթների սյուժեներ, այլ մի պիեսի շրջանակում հաջորդաբար միահյուսել է մի քանի հեքիաթ, որոնք գաղափարական ամբողջության են վերածվել: Այսպես, նա «Ճանապարհ» պիեսում միահյուսել է երկու տարածված ու սիրված հրաշապատում հեքիաթներ՝ Օխայ վարպետի և նրա աշակերտի սյուժեին պիեսում հաջորդում է Հազարան բլրուի սյուժեն: Հերոսները գաղափարատիպերի են վերածվում, բարու, գեղեցիկի ու քաջության գովքը երբեմն հեղինակին ուղղակի խոհերի ու դատողությունների է մղում:

Առավել բազմազան, բայց դարձյալ գաղափարաբանորեն իրար միահյուսված սյուժեներով է զարգանում

² Abd-El-Hameed Hawas, A prologue Tale as Manifesto Tale: Establishing a Narrative Literary Form and the Formation of Arabian Nights, 'Marvels & Tales, vol. 21, No. 1, Fary Tales, Printed Texts and Oral Tellings, 2007, pp. 65-77.

³ Ավագյան Խաչատուր, Ճանապարհ: Պիեսներ, Եր., 1988: Ավագյան Խաչատուր, Մեր խելոքները: Վավերական և անվավեր ժպիտներ: Պիեսներ, Եր., 2002:

¹ Լ.Հախվերդյան, Կոմպոզիցիան Սուրեն Քոչարյանի արվեստում, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», Եր., 1962, էջ 60:

«Մարդու ետին խելքը» պիեսը: Ստեղծագործության առանցքը դառնում է իրապատում հեքիաթի հայտնի հերոսը՝ խելացի, ճարպիկ, հնարագետ, որի շուրջ հյուսված տարբեր պյուժեները հեղինակը հմտորեն կապակցում է՝ հաջորդաբար իրար կցելով այժմային գյուղացու, դժվար խնդիրների լուծման, սուտասանի, թագավորի կամակոր աղջկա, կաղի, քյուսայի ու կուզի հեքիաթային պյուժեները: Թեև հեղինակը հիմնականում հավատարիմ է մնում ժողովրդական նյութին, սակայն երբեմն առկա են հեղինակային միջամտություններ, ինչպես նաև, այստեղ ևս երբեմն առկա է մերկապարանոց քարոզը և բարոյախոսությունը:

Ի.Ավագյանի այս պիեսները, թեև կարծես թե այսօր ընթերցող լայն հասարակության մեջ այնքան էլ տարածված չեն և, ցավոք, ըստ արժանվույն գնահատված չեն, սակայն դրանք իսկապես բավական ուշագրավ դրսևորումներ են հայ հեքիաթագրության պատմության մեջ: Հեքիաթների ընտրությունը և դրանց հմուտ համակցումները խոսում են հեղինակի՝ ժողովրդական հեքիաթների քաջատեղյակության մասին, իսկ տարբեր հեքիաթների միահյուսումը ծավալուն պիեսի հյուսվածքում ամբողջացնում է տվյալ հերոսի տիպը և լիովին ներկայացնում է ժողովրդական հեքիաթի հարուստ աշխարհը:

Ժողովրդական հեքիաթների մշակումների սակավաթիվ ժողովածուներից ուշարժան է արդի գրականության լավագույն հեղինակներից մեկի՝ Լևոն Խեչոյանի՝ «Տան պահապան հրեշտակը» (2002) գիրքը: Ավանդականին հակադրվելու ձգտումը այս ժողովածուում դրսևորվում է հեքիաթների ընտրության ինքնատիպ սկզբունքով: Հեղինակը հեքիաթների իր՝ բանաստեղծական դասակարգումն է առաջարկում՝ «հրաշապատում, իրապատում և էգոտերիկ» իր մշակած հեքիաթները համարելով երրորդ խմբի

պատումներ: «Բարձր Հայքի լեռներից իջած, մաքուր ու «աստվածաշնչյան ճմարիտ վկայություններ» պարունակող հեքիաթների մի փունջ է սա, ուր չեն հիշատակվում դևեր, քարացած քաղաքներ, պառավ վիուկներ», — կարդում ենք ժողովածուի առաջաբանում:¹ Խեչոյանի մշակած այս հեքիաթները գաղափարական մի ամբողջություն են կազմում. ակնհայտ է, որ հեղինակը իր առջև չի դրել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ժողովրդական նյութին հավատարիմ մնալը, բարբառային լեզուն, ժողովրդական խոսքի պարզությունը պահպանելը: Խեչոյանը լույս աշխարհ է հանում ժողովրդական պարզ պյուժեների մեջ թաքնված խոր փիլիսոփայությունները և քսանմեկերորդ դարի գրողի խոսքերով հնչեցնում է դրանք՝ կյանքի իմաստի, ճիշտ ապրել կարողանալու հմտության, բարու ու չարի հարաբերակցության, բարու՝ որպես բացարձակ արժեքի գերակայության մասին: Հեքիաթները մեկնաբանվում են քրիստոնեական գաղափարաբանության տեսանկյունից, հեղինակը հաճախ մանրամասն վերլուծում է հերոսների մտորումները, նրանցից յուրաքանչյուրի ապրելու փիլիսոփայությունը, բաներ, որ չենք կարող գտնել ժողովրդական հեքիաթների բնագրերում: Պատահական չէ նաև ժողովածուի վերնագիրը. «Տան պահապան հրեշտակը» «Դովլաթը» հեքիաթի փոխադրված տարբերակն է, որը բնութագրական է գրքի ընդհանուր բարոյախոսության տեսանկյունից. արդի նյութական դարում տան պահապան հրեշտակը երես է թեքել մարդկանցից, այդ է պատճառը, որ հերոսների գործերը «թաքս են գնում»: Հեղինակի հորդորն է՝ վերագտնել ճմարիտ հոգևոր արժեքները և այդպիսով կրկին շահել պահապան հրեշտակի ներկայությունը մեր տներում:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական

¹ Լևոն Խեչոյան, Տան պահապան հրեշտակը, Եր., «Անահիտ» հրատ., 2002թ.:

դարավոր սյուժեները այսօր և միշտ արդիական են հնչում յուրաքանչյուր նոր մեկնաբանողի շուրթերից: Ակնհայտ է նաև, որ ինչպես բանահյուսության, այնպես էլ գրականության մեջ աստիճանաբար ընդծվում է իրապատումի, բարոյախրատական սյուժեների գերակայությունը՝ որպես մերօրյա մարդուն ավելի հարագատ տեսակ:

Մշակման բոլորովին նոր ու անսովոր սկզբունք ենք տեսնում Գրիգոր Բաբայանի «Հայկական հակաժողովրդական հեքիաթներ» (1903) գրքում: Բուն իմաստով սրանք մշակումներ էլ չեն, այլ հեքիաթի մեկնաբանություններ, մտորումներ ու վերլուծություններ՝ գեղարվեստի շրջանակներում: Բաբայանի հեքիաթները կարծես ինքնատիպ կոլաժներ լինեն: Հեքիաթներում ժողովրդական տեքստից քաղված ուղղակի բարբառային հատվածների կողքին տեղ են գտնում երբեմն բավական խորթին և ոլորուն՝ հեքիաթին ոչ բնորոշ ոճով ու գրական լեզվով շարադրված հեղինակային մտորումները, որին կարող է հաջորդել, ասենք, հեքիաթային բնապատկերի նկարագրությունը՝ «Պուշկինի» թումանյանական թարգմանության բառացի տողերով¹, և այս ամենի կողքին՝ Շերենցի մասին Հենրիկ Մալյանի մտորումն ու Աստվածաշնչյան տողերի հիշատակումը: Նույնպիսի կոլաժ է ստեղծվում նաև լեզվական առումով. բարբառի կողքին՝ գրական բարձր ոճ, հետո գրաբար և այդպես շարունակ: Եվ եթե գրքի անվանումը կարող է ընթերցողին թուրիմացության մեջ գցել՝ հուշելով ժողովրդականությանը դեմ պատումների առկայություն, ապա իրենք՝ պատումները, բավական հեռացած լինելով ժողովրդականից, հանգում են նույն իրենց ակունքներին, ժողովրդի մտածողության բացահայտմանը, հեքիաթների իմաստի որոնումներին: Ընդ որում, հեղինակը

բավական ծանոթ է հեքիաթների գիտական մեկնություններին, և հաճախ այս կամ այն մոտիվի վերաբերյալ իբրև թե իմիջիայոց ավելացնում է, թե ինչպես գիտնականները կվերլուծեին տվյալ սյուժեն կամ մոտիվը՝ ելնելով, ասենք, ծիսական կամ հոգեվերլուծական տեսություններից:

Բանահյուսական հեքիաթի՝ այս կամ այն սկզբունքով իրագործվող հեղինակային մշակումներից բացի, այսօր գրականության մեջ մեծ տեղ է զբաղեցնում հեքիաթային սյուժեների և կերպարների օգտագործումը՝ հեղինակային հյուսվածքում: Ընդ որում, ավանդական սյուժեներն այսօր տարբեր հեղինակների երկերում վերաիմաստավորվում են, վերափոխվում, ժամանակակից մեկնություններ ստանում: Այս տեսակետից բնորոշ օրինակ է ժամանակակից գրող Արփի Ոսկանյանի «Կարմիր գլխարկով գորշ գայլը»² ստեղծագործությունը, որը հայտնի հեքիաթի ժամանակակից մեկնաբանություն է: Ավանդական չարի կրող գայլը, որը դարեր ի վեր իր վրա է վերցրել չարի մարմնավորման բարդ ու անշնորհակալ գործը, ահա, հոգնել է իր չարությունից, և հերթական անգամ հրաժարվում է ուտել Կարմիր Գլխարկին, իսկ ուշացող գայլին սպասելիս փայտահատների հետ հարբած Կարմիր գլխարկը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչու գայլը չի շտապում իմանալ իր տատիկի տան տեղը, որպեսզի հետո «խժռի» և՛ տատիկին, և՛ իրեն³: Չարի և

² Արփի Ոսկանյան, «Կարմիր գլխարկով գորշ գայլը», <http://arpi-voskanyan.blogspot.com>, 07.05.2013:

³ Ի դեպ, չարիքի մեղքն իր վրա վերցրած և հեքիաթներում անվերջ բացասականի կրող գայլի հանդեպ նույնպիսի խղճահարական վերաբերմունք մոտիվներով էր կառուցված վերջերս Խամահիկների թատրոնում ցուցադրված մի ներկայացում, ուր իրար էին կցված Կարմիր գլխարկի ու երեք խոզուկների հեքիաթները: Այստեղ գայլը հանդես էր գալիս որպես մի խեղճ, միշտ քաղցած ու հալածված կենդանի, որի մեղքն ընդամենը այն է, որ ինչպես բոլոր կենդանի արարածները, ինքն էլ ուզում է ուտել, սակայն յուրաքանչյուր դեպքում

¹ Բաբայան Գրիգոր, Հայկական հակաժողովրդական հեքիաթներ, Եր., 1903, էջ 8:

բարու դասական ընկալումը կասկածի ենթարկելու, մարդկային մտածողության ավանդական հեքիաթային կաղապարները վերաբժնորելու այսպիսի մոտեցումն ընդհանրապես հատուկ է արդի գրականությանը:

«Կիկոսը» հեքիաթի թումանյանական մշակման մի յուրահատուկ մեկնաբանություն ենք տեսնում Արմեն Օհանյանի «Կիկոսի վերադարձը»¹ ստեղծագործության մեջ: Հեղինակի համար սկզբնաղբյուր են հանդիսանում ոչ թե հեքիաթի ժողովրդական տարբերակները, այլ Հովհաննես Թումանյանի մշակումը: Հեղինակը այն համոզման է, որ «իր ժողովրդի հետագա հաջողությունը Թումանյանի հեքիաթները վերապրելուց է կախված», քանի որ «հայկական ժամանակը քարացել է երեք հզոր հեքիաթի մեջ. «Ձախորդ Փանոսը հայի անցյալն է, հայի բախտը, որ չի բերել, «Քաջ Նազարը»՝ ներկան, հայոց երազն ու երազանքը, իսկ «Կիկոսի մահը»՝ վախճան ապագայի նկատմամբ»²: Իրականում լույս աշխարհ եկած Կիկոսը ողջ կյանքի ընթացքում վերապրում է իր մահը նորից ու նորից և ջրհորի ու ծառի սարսափը նրան մղձավանջ է դառնում՝ թույլ չտալով ապրել: Ավելի խորհրդանշական է պատմվածքի ավարտը. Կիկոսը, որ ի վերջո իր սարսափներից ազատվելու համար փախչում է և բարձրանում արգելված հաստաբուն ծառը, հանկարծ տեսնում է, որ ինքն այնտեղ մենակ չէ. «Մեկ ել տեսնեմ ի՞նչ: Գալիս են, չորս կողմից գալիս են ու գալիս՝ մեծ ու փոքր, ահել-ջահել ու բոլորն աչքիս Կիկոս են երևում. թե՛ բոլորն իրոք Կիկոս են, չեմ հասկանում: Լիքն են: Բոլորը՝ գդակավոր, բոլորը՝ պոպոզավոր, մրջյունների նման վրա են տվել Հաստաբնին ու բարձրանում են: Շատ-շատ են, Կիկոսների մի

ամբողջ անկանոն բանակ»³: Հիմար հերոսներին ծաղրող ժողովրդական պարզ պատումը ներքին խոր ենթաշերտեր է ստանում: Ապագայի նկատմամբ սարսափը, որն առաջանում է կանխատեսվող աղետի սպասումից, խաթարում է այս դեպքում արդեն ոչ թե հիմար քույրերի ու նրանց միջի խելոք հոր կյանքը, այլ՝ ծնվելիք որդու:

Ժողովրդական հեքիաթի առանձին պլոթներն ու կերպարներն այսօր հայտնվում են նաև հեղինակային հեքիաթի կամ այլ ժանրի համատեքստում՝ հաճախ կրելով սիմվոլիկ իմաստ, նոր բովանդակության մեջ ավանդական ընկալումների ակնարկ պարունակելով: Ճիշտ այսպես, Նորայր Աղալյանի՝ 2010թ. լույս տեսած «Ծաղրածուն մեծ քաղաքում»⁴ վեպում կենտրոնական դերում են Քաջ Նազարի և Ուստիանի կերպարները: Բախտի բերմամբ թագավոր դարձած անարժան հերոսի թեման ժամանակակից իրականության մեջ շարունակում է պահպանել իր արդիականությունը՝ այս պարագայում վերածվելով մի սևապարծ, ինքնագոհ, փառատենչ, դաժան ու արյունաբերու միապետի մասին պատմող վիպական ծավալուն հյուսվածքի: Ուշագրավ է, որ ողջ վեպը պատմվում է որպես մի ծերունի հեքիաթասացի կողմից պատմվող հեքիաթ, իսկ հեղինակը իրեն ներկայցնում է «բանահավաք-գրառողի» դերում:

Իհարկե և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքում, ակնհայտ է, որ գործ ունենք ոչ թե բանահյուսական նյութի մշակման հետ, թեկուզ և բնագրից շատ հեռացած, այլ բանահյուսության գրականացված տարբերակների հետագա զարգացումների: Ե՛վ Կարմիր գլխարկը, և՛ Կիկոսը, և՛ Քաջ Նազարը, ի սկզբանե ծնունդ առնելով բանահյուսության մեջ, հետագայում գրականացվել են և տիպականացվել: Այս

նրան դա չի հաջողվում: Այդպիսով նա և՛ քաղցած է մնում, և՛ հալածվում է իր չարության համար:

¹ Արմեն Օհանյան, Կիկոսի վերադարձը, Պատմվածքներ, Եր., «Աստաբեն», 2013, 42-53:

² Նույն տեղում, էջ 42-43:

³ Նույն տեղում, էջ 51-52:

⁴ Նորայր Աղալյան, Ծաղրածուն մեծ քաղաքում, Եր., ՀԳՄ հրատարակություն, 2010:

առումով, բազմաթիվ գրողների կողմից այս պերսոնաժների օգտագործումն արդեն հեռու է բանահյուսական հեքիաթի մշակում կոչվելուց, մասնավորապես, եթե հաշվի առնենք, որ Քաջ Նազար կոչվող տիպի թումանյանական մշակումը՝ հերոսի անունից սկսած, արդեն բավական ինքնուրույն կերպար է՝ բանահյուսական տարբերակից հեռացած:

Ժողովրդական հեքիաթների գրական մշակումներին զուգահեռ վերջին տասնամյակներին ավանդույթ է դարձել նաև բանագետ-բանահավաքների կողմից կազմված և մշակված ժողովածուների ի հայտ գալը: Եթե արդի հայ գրողները նյութին ինքնուրույն՝ հեղինակային մոտեցում են ցուցաբերում՝ վերաիմաստավորելով կամ սեփական մեկնաբանություններով ներկայացնելով այն, ապա հեքիաթների բնագրերին հարազատ, սակայն լեզվական առումով մատչելի ժողովածուներ ստեղծելու գործն այսօր ստանձնել են բանագետները, որն էլ իրականացվում է բարբառի մեղմացման՝ փոխադրության ճանապարհով:

Կազմված լինելով նյութին քաջատեղյակ բանագետների կողմից՝ այս ժողովածուները պարունակում են հայ ժողովրդական հեքիաթացանկից հմտորեն ընտրված, կառուցիկ ու գաղափարապես հագեցած հեքիաթներ, որոնց մեծ մասը մինչ այդ գրական մշակման չէին ենթարկվել, և ընթերցողը դրանց կարող էր ծանոթ լինել միայն բարբառային հրատարակությունների միջոցով: Լեզվական մշակվածության, բարբառի փոխադրման եղանակները բավական տարբեր են: Եթե մի ժողովածուում բարբառը հնարավորինս պահպանված է, և հանված են միայն խիստ անհասկանալի ձևերը, ապա մյուսում լեզուն գրեթե փոխադրված է գրականի՝ որոշ ժողովրդական բառեր ու արտահայտություններ միայն պահպանելով:

Գործի առաջամարտիկը հայ իրականության մեջ Արտաշես Նազինյանն էր, որը, լինելով «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական, գիտական հրատարակության առաջին հատորների կազմողն ու առաջաբանների հեղինակը, գրեթե միաժամանակ նախաձեռնում է նաև ժողովրդական հեքիաթների գեղարվեստական հանրամատչելի ժողովածուների կազմման և մշակման գործը: 1956թ. լույս է տեսնում նրա մշակած հեքիաթների առաջին ժողովածուն՝ Հ.Կոջոյանի նկարազարդումներով, որը վերահրատարակվում է նաև 1990թ.: Հետագա տարիներին Ա.Նազինյանի մշակմամբ լույս են տեսնում ժողովրդական հեքիաթների մշակումների նաև այլ ժողովածուներ՝ 1960թ., 1967թ., 1986թ. և 1995թ.: Ընդ որում, Նազինյանի կազմած և մշակած հեքիաթների այս ժողովածուները լույս են տեսել նաև թարգմանաբար և ներկայացվել արտասահմանյան ընթերցողին՝ ռուսերեն (Մոսկվա, 1969), լիտվերեն (Վիլնյուս 1979), լատիշերեն (Ռիգա 1981) և գերմաներեն (Բեռլին 1978): Վերջինները հիմնականում միջնորդավորված թարգմանություններ էին՝ ռուսերենից:

Այսպիսով, որն էր Նազինյանի մշակման կամ ավելի ճիշտ է ասել, փոխադրության սկզբունքը, որն էլ հետագայում շարունակեցին մյուս բանագետները: Նազինյանը նախ կարևորում էր հեքիաթների ընտրությունը՝ նախապատվությունը տալով «դիպուկ ու նպատակալաց, ժողովրդական իդեերն ու երազանքները առավել ցայտուն արտահայտող» դիպաշարերին, երկրորդ՝ հաշվի առնելով, որ ժողովածուն նախատեսվում էր մանկապատանեկան հասակի ընթերցողի համար՝ բանագետը խուսափում է «նեղ բարբառային և օտար բառերից ու արտա-

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Արտաշես Մկրտիչի Նազինյան, Կենսամատենագիտություն, Ներածությունը և մատենագիտությունը՝ Եվա Զաքարյանի, Երևան, «Մուղնի» հրատ., 2004:

հայտություններից»¹ միևնույն ժամանակ լիովին չգրականացնելով այն և պահպանելով ժողովրդական բառ ու բանի համն ու հոտը: Նազիկյանը այս ժողովածուներին հիմնականում կցում էր առաջաբաններ, ուր մատչելի բացատրություն էր տրվում հեքիաթ ժանրի, տեսակների, հիմնական թեմաների ու արտահայտած գաղափարների մասին: Ի վերջո, որպես մանկական ընթերցանության ժողովածուներ, դրանք անպայման լույս էին տեսնում գեղեցիկ նկարազարդումներով, մի բան, որը բնականաբար բացակայում էր ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակություններում: Նազիկյանի այս ժողովածուները բավական մեծ հաջողություն են ունեցել, և դրա վկայությունն են դրանց վերահրատարակությունները անգամ նրա մահվանից հետո և մինչև մեր օրերը²:

Ժողովրդական հեքիաթների նմանատիպ մշակում–փոխադրություններ իրականացրել է նաև բանագետ Նելլի Հակոբյանը: 1977թ. լույս է տեսնում նրա և Ա. Սահակյանի կազմած և մշակած «Հիմա՛ ես ուզում, թե հետո» գրական–գեղարվեստական ժողովածուն, ուր դարձյալ գործում էր լեզվական մշակման նույն սկզբունքը՝ բարբառի մեղմացման և փոխադրության: Ժողովածուում տեղ գտած հեքիաթները հիմնականում նոր գրառումներ էին: Ի դեպ, այս ժողովածուից երկու տարի անց՝ 1980թ., լույս է տեսնում Ն. Հակոբյանի կազմած արդեն գիտական ժողովածուն՝ կուռ գիտական ապարատով և հեքիաթների՝ աարնե–թոմփսոնյան նշացանկի համապատասխան դասակարգումով, ուր տեղ են գտնում նախորդ՝ գեղարվեստական հրատարակության մշակված հեքիաթների բար-

բառային բնագրերը: Ավելի ուշ՝ 1993թ., տպագրվում է Նելլի Հակոբյանի կազմած և մշակած ևս մեկ գեղարվեստական ժողովածու՝ «Յոթ խրատական հեքիաթ» վերնագրով, որը վերջերս՝ 2010թ. վերահրատարակվել է «Արեգ» հրատարակչության կողմից: Ընդ որում, և՛ 1977թ., և՛ 1993թ. ժողովածուները խմբագրված էին Հրանտ Մաթևոսյանի կողմից: «Յոթ խրատական հեքիաթ» ժողովածուում տեղ էին գտել նախորդ 1977թ. ժողովածուում լույս տեսած հեքիաթներից ընտրված 7 առակատիպ պատումներ, պարզապես բարոյախոսությունն ավելի ընդգծելու նպատակով փոխվել էին հեքիաթների վերնագրերը՝ փոխարինվելով հաջող կերպով ընտրված ասացվածքներով: Այսպես. «Ով ինչ անի, իրեն կանի» (էջ 153) հեքիաթը երկրորդում դրված է «Փոս փորողը փոսը կընկնի» վերնագրով, «Ուրիշը քեզ ախպեր չի դառնա» հեքիաթը վերնագրված է «Արյունը ջուր չի դառնա», «Մրջյունները և փիղը» հեքիաթը՝ «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք», «Թաքուն չի մնա» հեքիաթը՝ «Մախաթը պարկում չես թաքցնի», «Ամենավատ բանը» հեքիաթը՝ «Աչքածակի աչքը միայն հողով կկշտանա» և այլն: Խոհախրատական հեքիաթների այս փոքրիկ փունջը և՛ բովանդակությամբ, և՛ քանակով հիշեցնում է աստվածաշնչյան պատվիրանները:

Բանագետների կողմից կազմված հեքիաթների հանրամատչելի ժողովածուների շարքում բարբառի պահպանման տեսակետից առանձնանում է Սերգեյ Վարդանյանի կազմած «Հրեղեն ձին» (1981) գիրքը, որն ամփոփում է հեքիաթներ, առակներ, երգեր, առած–ասացվածքներ և այլ ժանրեր՝ գրի առնված երկրորդից տասներորդ դասարանի աշակերտների կողմից: Այս ժողովածուն ինչ–որ առումով նույնիսկ չի էլ կարելի փոխադրություն համարել, քանի որ լեզվական մասնակի փոխադրության ենթարկելով հանդերձ՝ ժողովածուի

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արտաշես Նազիկյանի մշակմամբ, Եր., «Արևիկ» հրատ., 1990, էջ 5:

² 2004 և 2007թթ. վերահրատարակվել են նրա 1986թ. «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» մատենաշարով լույս տեսած ժողովածուի հայերեն և ռուսերեն տարբերակները:

կազմողը հիմնականում պահպանել է ժողովրդական նյութը հարազատ բարբառով: Քանի որ ժողովածուն նախատեսվում էր մանկապատանեկան ընթերցանության համար՝ Ս.Վարդանյանը յուրաքանչյուր հեքիաթի վերջում տալիս է այդ պատումում հանդիպած բարբառային անհասկանալի բառերի փոքրիկ ցանկեր: Լիովին գրական լեզվի են փոխադրված միայն Համշենի բարբառով պատումները: Նույն սկզբունքներով է կազմված Ս. Վարդանյանի հրատարակած հաջորդ ժողովածուն՝ «Թագավորի երազները» (2003թ.):

Բարբառի հանդեպ նման հոգածու վերաբերմուքը ժամանակին քաջալերանքի է արժանացել Ռաֆայել Իշխանյանի կողմից, որն այն անվանել է ճիշտ ուղղությամբ արված մի քայլ: Հանդես գալով բարբառների պաշտպանության դիրքերից՝ լեզվաբանը խրախուսում է բանահյուսական երկերի փոխադրության այդ կերպը՝ բարբառի մեղմացման, հասկանալիության աստիճանի հասցնելու և ոչ թե լիովին գրականացման ճանապարհով¹: Լեզվի տեղային դրսևորումները՝ բարբառները, միայն տվյալ լեզվի հարստության մասին են խոսում, որոնք առաջարկում են ձևային հարուստ բազմազանություն: Անշուշտ լեզվական որոշակի մշակումը երբեմն պարզապես անհրաժեշտ է՝ տվյալ ազգի շրջանակներում համընդհանուրին մատչելի բնագրեր հրատարակելու համար, սակայն, կարծում ենք, որ ցանկալի չէ այդպիսի փոխադրության ճանապարհին լիովին գրականացնել բանահյուսական բնագրերը, չէ՞ որ բանահյուսությունը գոյություն ունի հենց այդ բարբառների միջոցով: Կան շատ գեղեցիկ բարբառային ձևեր ու արտահայտություններ, առանց որոնց ժողովրդական պատումը կարող է կորցնել իր ողջ հմայքը, դրանք մի

կողմից ստեղծում են տեղային բներանգ և պարզ ու անմիջական պատում, մյուս կողմից դրանց օգտագործումը նպաստում է բարբառային այդպիսի դրսևորումների պահպանմանն ու այդ միջոցով նաև՝ լեզվական արտահայտչամիջոցների հարստացմանը, լեզվի տարբեր շերտերի այլընտրանքային տարբերակների մեծ պահուստի ձևավորմանը:

Բանահյուսական հեքիաթների գեղարվեստական մատչելի ժողովածուներ ստեղծելու գործը մեր օրերում շարունակում է նաև բանագետ Ալվարդ Ղազիյանը: 2007թ. լույս է տեսնում Ա. Ղազիյանի կազմած և մշակած՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն: Ժողովածուն ինքնատիպ է հատկապես այն բացող և փակող չափածոներով՝ նախերգով (Հեքիաթ, հեքիաթ, պապա...), և վերջերգով (Վազքով եկան մուկն ու կատուն...): Բոլորովին վերջերս՝ 2011թ., լույս է տեսել Ա.Ղազիյանի կազմած և մշակած ևս մեկ ժողովածու՝ «Երգիծական գրույցներ և զվարճախոսություններ» վերնագրով: Չափսերով բավական փոքր՝ գրեթե գրպանի օգտագործման չափսի մի ժողովածու է սա՝ շատ ճաշակով կազմված և մշակված, ուր տեղ են գտել նաև հայտնի երգիծական հեքիաթների համառոտ տարբերակներ: Այսպիսի ժողովածուները ցանկալի են ժողովրդական նյութը վերստին լայն շրջանառության մեջ դնելու առումով:

Այսպիսով, ակնհայտ է, որ թեև ժողովրդական հեքիաթը աստիճանաբար կորցնում է իր ավանդական կենցաղավարման կերպը, այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ կենսունակ իր գրառված տարբերակով: Ու թեև այս վերջիններն արդեն գրական արժեք են ձեռք բերում, անկախ մշակման կամ փոխադրության սկզբունքներից, սակայն շարունակում են պահպանել և փոխանցել ավանդական նյութը՝ այդպիսով հավերժ կենդանի պահելով այն:

¹ Ռաֆայել Իշխանյան, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», 1983, թիվ 1:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արև հեքիաթ: Հայ ժողովրդական հեքիաթներ, Սուրեն Քոչարյանի մշակմամբ, Եր., 1979:
2. Հախվերդյան Լ., Կոմպոզիցիան Սուրեն Քոչարյանի արվեստում, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», Եր., 1962, էջ 60:
3. Լևոն Խեչոյան, Տան պահապան հրեշտակը, Եր., «Անահիտ» հրատ., 2002թ.:
4. Բաբայան Գրիգոր, Հայկական հակաժողովրդական հեքիաթներ, Եր., 1903:
5. Ոսկանյան Արփի, Կարմիր գլխարկով գորշ գայլը, <http://arpi-voskanyan.blogspot.com> 07.05.2013:
6. Օհանյան Արմեն, Կիկոսի վերադարձը, Պատմվածքներ, Եր., «Անտարես», 2013:
7. Աղալյան Նորայր, Ծաղրածուն մեծ քաղաքում, Եր., ՀԳՄ հրատարակություն, 2010:
8. Նազինյան Մկրտիչ, Կենսամատենագիտություն, Ներածությունը և մատենագիտությունը՝ Եվա Զաքարյանի, Երևան, «Մուղնի» հրատ., 2004:
9. Հայ ժողովրդական հեքիաթներ, Արտաշես Նազինյանի մշակմամբ, Եր., «Արևիկ» հրատ., 1990:
10. Հիմա՞ ես ուզում, թե հետո, կազմող և մշակող Հակոբյան Ն., Սահակյան Ա., Եր., 1977թ.:
11. ՀԺՀ 1980թ., Ն. Հակոբյանի կազմած գիտական ժողովածուն
12. Յոթ խրատական հեքիաթ 1993թ., կազմող և մշակող Նելլի Հակոբյան:
13. Հրեդեն ձին, Վարդանյան Սերգեյ, 1981:
14. Իշխանյան Ռաֆայել, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», 1983, թիվ 1:
15. Թագավորի երազները, Ս. Վարդանյանի (2003թ.)
16. Հայ ժողովրդական հեքիաթներ 2007թ. կազմող և մշակող Ա. Ղազիյան:
17. Երգիծական զրույցներ և զվարճախոսություններ, 2011թ., կազմող և մշակող Ա. Ղազիյան:

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ОБРАБОТКИ И ПЕРЕЛОЖЕНИЯ ФОЛЬКЛОРНОЙ СКАЗКИ

НВАРД ВАРДАՆՅԱՆ

Преподаватель факультета армянской филологии Ереванского государственного университета, кандидат фил. наук

ՈԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Заведующий отделом обеспечения качества образования Международного научно-образовательного центра Национальной Академии наук РА

Несмотря на то, что в наши дни фольклорная сказка не столь популярна, как раньше, в литературе она продолжает развиваться. Авторские подходы к народному материалу сегодня достаточно различны, начиная с литературных обработок, заканчивая языковыми переложениями.

За последние десятилетия сборники народных сказок, составленные на основе литературной обработки, хотя и мало, но издавались. В них содержатся близкие к оригиналу ценные обработки, как обогащенные своеобразным авторским подходом (А. Кочарян, Л. Хечоян), так и созданные по совершенно новым необычным принципам (Г. Бабаян). А некоторые писатели представляют известные сказочные сюжеты, переосмысливая их или наделяя современными комментариями (А. Восканян, А. Оганян, Н. Адалян).

Помимо художественных обработок в настоящее время на литературном рынке большое место занимают сборники, составленные фольклористами, в которых народный материал подвергнут языковому переложению, а непонятные и замысловатые диалектные формы представлены в смягченном виде (А. Назинян, Н. Акопян, А. Газиян, С. Варданын). Такие популярные сборники весьма способствуют распространению народного материала на новом уровне.

CONTEMPORARY TRENDS OF DEVELOPMENT AND EXPOSITION OF FOLKLORE TALE

NVARD VARDANYAN

Lecturer of the Department of Armenian Philology, Yerevan State University, PhD in Philological Sciences

NARINE VARDANYAN

Head of the Quality Assurance Department, International Scientific-Educational Center of National Academy of Sciences of Republic Armenia

Though nowadays the folklore tale is not told to that extent it used to, it continues its development in literature. Author approaches to folklore material is currently quite different starting from literary adaptation to language expositions.

Only a few collections of folklore tales created through literary adaptations have been recorded in recent decades. They contain both high-quality adaptations close to material with unique author approaches (S. Qocharyan, L. Khechoyan) and completely new adaptations created with extraordinary principles (G. Babayan).

Some authors give new meaning or contemporary interpretations to the plots of famous folklore tales (A. Voskanyan, A. Ohanyan, N. Adalyan).

Besides literary adaptations, the collections drawn up by folklorists take up a large place in the contemporary literary market, where folklore material is subjected to language expositions, while non-understandable and abstruse dialectal forms are mitigated (A. Nazinyan, N. Hakobyan, A. Ghaziyan, S. Vardanyan). Such popular collections are very favorable to put folklore material into circulation once again.

Հոդվածի ներկայացման փառերթիվը՝ 03.03.14 թ.